ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

08-ը հունվարի 2025թ.

Ուղերձ ՀՀ ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա կապակցությամբ

ՀՀ ազգային անվտանգության մարմինների աշխատակցի օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ոլորտի ներկայացուցիչներին, համակարգի բոլոր ծառայողներին:

Կարևոր ու գնահատելի է ազգային անվտանգության մարմինների հետևողական աշխատանքը, որն ուղղված է մեր հայրենիքի պաշտպանությանը, իրավակարգի պահպանմանը, օրինականության և երկրի ներքին կայունության հաստատմանը: Ինչպես պատերազմական իրավիճակներում, այնպես խաղաղ ժամանակ համակարգի ծառայողները շարունակում են իրականացնել չբարձրաձայնվող, աննկատ, սակայն բարդ ու պատասխանատու գործունեություն՝ դառնալով մեր երկրի, մեր ժողովրդի անվտանգության ու պաշտպանության առաջին երաշխավորը: Ծառայության մեջ և ռազմաճակատում բազում հաջողված գործողություններին զուգահեռ, ցավոք, ԱԱԾ սահմանապահ զորքերը ունեցել են նաև մարդկային անդառնալի կորուստներ. առաջնահերթ խոնարհումով հարգենք ազգային անվտանգության մարմինների նվիրյալ ծառայակիցների հիշատակը: Ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ աշխատատակիցներ. սահմանապահ զորքերի ծառայողներ.

Անվտանգային հարցերում մեր ժողովուրդը շարունակում է մեծապես ապավինել ուժային կառույցների բարձր պատրաստվածությանն ու հմուտ գործողություններին, ուստի կարևորելով ձեր ծառայության դերը, կրկին շնորհավորում եմ մասնագիտական օրվա առիթով. մաղթում եմ քաջառողջություն, խաղաղ, անվտանգ ու արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ